ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 517 - Ա **28 դեկտեմբերի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ N 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգ>>-ի 9-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 3 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. դեկտեմբերի 28 -ի

թիվ 517-Ա որոշմամբ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցութային հանձնաժողովի

22 դեկտեմբերի 2016թ. ք. Գավառ

2016 թվականի դեկտեմբերի 22-ին կայացավ ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի մարզային մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Կ. Հակոբյան
քարտուղար՝ Գ. Խաչատրյան
անդամներ՝ Մ. Ղազարյան
Կ. Բաղդասարյան
Գ. Գրիգորյան

Օրակարգում

<<Գավառտրանս>> ՍՊ ընկերության կողմից սպասարկվող Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք - Գավառ թիվ 1 ներմարզային միկրոավտոբուսային երթուղում ներգրավված միկրոավտոբուսը փոխարինելու մասին:

Քննարկվեց՝

<<Գավառտրանս>> ՍՊ ընկերության տնօրենի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ ԳՄ-75 գրությունը, համաձայն որի առաջարկվում է Գավառ(Ա/Կ)-Գեղարքունիք-Գավառ թիվ 1 ներմարզային միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱՋ-322132 մակնիշի 34FS083 պետհամարանիշի /03-26L դեղին հիմնագույնի համարանիշ/ 2007 թվականի արտադրության միկրոավտոբուսը տեխնիկապես անսարք լինելու պատճառով հանել երթուղու սպասարկումից, որի փոխարեն երթուղու սպասարկման գործում ներգրավել ԳԱՋ-322131 մակնիշի 34AL383 պետհամարանիշի 2004 թվականի արտադրության միկրոավտոբուսը: Սահմանված կարգի համաձայն կատարվել է ներկայացված տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի գնահատում: Միկրոավտոբուսը ստանալով 60 միավորից բարձր գնահատական ապահովել է նաև երթուղու հնարավորի (առանց լրացուցիչ միավորների) 70%-ից բարձր միջին գումարային միավոր:

Առաջարկեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 9-րդ կետի 10-րդ ենթակետի, 69-րդ կետի 2-րդ ենթակետի և 71-րդ կետի պահանջները <<Գավառտրանս>> ՍՊ ընկերությանը թույլատրել կատարելու առաջարկված փոփոխությունը:

Հանձնաժողովը որոշեց

1. Գավառ(Ա/Կ)-Գեղարքունիք-Գավառ թիվ 1 ներմարզային միկրոավտոբուսային երթուղին սպասարկող ԳԱՋ-322132 մակնիշի 34FS083 պետհամարանիշի /03-26L դեղին հիմնագույնի համարանիշ/ 2007 թվականի արտադրության միկրոավտոբուսը փոխարինել ԳԱՋ-322131 մակնիշի 34AL383 պետհամարանիշի 2004 թվականի արտադրության միկրոավտոբուսով:

Տրանսպորտային միջոցի					
№	մակնիշը	հ/հ	ղ/հ	թ/պ	վարորդի անունը, ազգանունը
1	ԳԱՋ-322131	34AL383	-	2004	Մամիկոնյան Նվեր

Հիմք՝ հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի մրցութային թերթիկները 5 թերթից, մրցութային ամփոփիչ թերթիկը 1 թերթից և <<Գավառտրանս>> ՍՊ ընկերության տնօրենի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ ԳՄ-75 գրությունը:

2. << Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Կ. Հակոբյան

քարտուղար՝ Գ. Խաչատրյան

անդամներ՝ Մ. Ղազարյան

Կ. Բաղդասարյան

Գ. Գրիգորյան